

Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի II.1«բ» Հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնություն

Սույնով Անդամները համաձայնում են հետևյալի մասին.

1. II Հոդվածի 1«բ» կետից բխող իրավական իրավունքների և պարտավորությունների թափանցիկությունն ապահովելու համար, այդ դրույթում հիշատակվող ամրագրված մաքսային հոդվածների նկատմամբ գանձվող ցանկացած «այլ տուրքերի կամ վճարների» բնույթն ու մակարդակը գրանցվում են ՄԱԳ-Հ-1994-ին կցված զիջումների Ժամանակացանկերում՝ մաքսային այն հոդվածի դիմաց, որի նկատմամբ դրանք կիրառվում են: Հասկացվում է, որ այդպիսի գրանցումը չի փոխում «այլ տուրքերի կամ վճարների» իրավական բնույթը:

2. II Հոդվածի նպատակներով «այլ տուրքերի կամ վճարների» ամրագրման օր է 1994թ. ապրիլի 15-ը: Այդուհանդերձ, «այլ տուրքերը կամ վճարները» Ժամանակացանկերում գրանցվում են այդ օրը կիրառվող մակարդակների վրա: Չիջումների յուրաքանչյուր հետագա վերաբանակցման կամ նոր զիջումների բանակցման դեպքում խնդրո առարկա մաքսային հոդվածի համար կիրառման ժամկետ է դառնում նոր զիջումը համապատասխան Ժամանակացանկում ընդգրկելու օրը: Այնուամենայնիվ, այն փաստաթղթի ժամկետը, որով որևէ մաքսային առանձին հոդվածի մասով զիջումը առաջին անգամ ընդգրկվել է ՄԱԳ-Հ-1947-ում կամ ՄԱԳ-Հ-1994-ում, նույնպես շանունակվում է գրանցվել Ներդիր-էջ Ժամանակացանկերի 6-րդ սյունակում:

3. «Այլ տուրքերը կամ վճարները» գրանցվում են մաքսային բոլոր ամրագրումների առնչությամբ:

4. Եթե մաքսային հոդվածը նախկինում զիջման ենթակա է եղել, ապա համապատասխան Ժամանակացանկում գրանցված «այլ տուրքերի կամ վճարների» մակարդակը չպետք է ավելի բարձր լինի, քան զիջման այդ Ժամանակացանկի մեջ առաջին անգամ ընդգրկելու ժամանակ ընդունված մակարդակը: ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, կամ ՄԱԳ-Հ-1994-ում խնդրո առարկա Ժամանակացանկի ընդգրկման փաստաթուղթը ԱՀԿ Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, եթե դա ավելի ուշ ժամկետ է, ցանկացած Անդամ ազատ է վիճարկելու «այլ տուրքի կամ վճարի» գոյությունը՝ այն հիմքի վրա, որ խնդրո առարկա հոդվածի սկզբնական ամրագրման ժամանակ այդ «այլ տուրքը կամ վճարը» գոյություն չի ունեցել, ինչպես նաև ազատ է վիճարկելու որևէ «այլ տուրքի կամ վճարի» գրանցված մակարդակի համապատասխանությունը նախկինում ամրագրված մակարդակի հետ:

5. Ժամանակացանկերում «այլ տուրքերի կամ վճարների» գրանցումով վնաս չի հասցվում ՄԱԳ-Հ-1994-ով սահմանված, 4-րդ կետի ազդեցության տակ ընկնողներից տարբեր իրավունքներին ու պարտավորություններին դրանց համապատասխանությամբ: Ցանկացած պահի բոլոր Անդամներն ազատ են վիճարկելու ցանկացած «այլ տուրքի կամ վճարի» համապատասխանությունն այդ պարտավորություններին:

6. Սույն Փոխհամաձայնության նպատակներով, կիրառվում են ՄԱԳ-Հ-1994-ի XXII և XXIII Հոդվածների դրույթները՝ ինչպես դրանք մշակվել և կիրառվում են Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ:

7. Այն «այլ տուրքերը կամ վճարները», որոնք Ժամանակացանկում բաց են թողնվել՝ ՄԱԳ-Հ-1994-ում խնդրո առարկա Ժամանակացանկի ընդգրկման փաստաթուղթը մինչև ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը ՄԱԳ-Հ-1947-ի ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ Գլխավոր տնօրենին, իսկ դրանից հետո՝ ԱՀԿ Գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու ժամանակ, այնուհետև չեն ավելացվում դրան, և ցանկացած «այլ տուրք կամ վճար», որը գրանցվել է կիրառելի ժամկետում եղածից ավելի ցածր մակարդակով, չի վերադարձվում այդ մակարդակին, եթե այդպիսի լրացումներ կամ փոփոխություններ չեն կատարվել փաստաթղթի ի պահ հանձնելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

8. ՄԱԳ-Հ-1994-ի II Հոդվածի 1«բ» կետի նպատակներով յուրաքանչյուր զիջման համար կիրառելի ժամկետի վերաբերյալ 2-րդ կետի որոշումը փոխարինում է կիրառելի ժամկետի վերաբերյալ 1980թ. մարտի 26-ին կայացված որոշմանը (BISD 27S/24):